Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

20091

372
G-93

1914

372
Ն-93
W 151

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս.-ԿԱՏԱՐԻՆԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԵՒ
Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ
1913-1914 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

2010
2002
370
Ձ455-56

1914

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԱՑ
ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

8487

372
Ն-93

370
Հ455-ՏԵ

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս.-ԿԱՏԱՐԻՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ

Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

1913-1914 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1004
15999

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/III-1922
Москва, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1914

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԱՑ

ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

Ներկայ 1913-1914 ուսումնական տարում Ազգային դպրոցների ուսումնական մասի և ընդհանուր կարգերի մէջ էական փոփոխութիւններ չեն եղել։ Մանկավարժական Խորհուրդը միշտ նախանձախնդիր է մնացել այն սկզբունքներին ու դպրոցական կարգերին, որ նախորդ երեք տարիներում ընդունուած և հաստատուած են եղել։ Էական փոփոխութիւններ չկատարուելու, ինչպէս նաև, պէտք է ասենք, զգալի յառաջդիմութիւն էլ չլինելու պատճառները մի քանիս են։— ա) Մենք այն համոզումն ենք ունեցել, որ ամէն բարեկարգութիւն, նորութիւն ամրապնդելու և դպրոցական կեանքի արեան մէջ պատուաստելու համար՝ անհրաժեշտ պէտք ունի տարիների գործադրութեան, յարմարեցման. դա դպրոցական օրգանիզմի մէջ նոյն արժէքը պիտի ձգէ, ինչ որ սովորութիւնը ֆիզիոլոգիական օրգանիզմի մէջ։ Այս նկատումով երբէք չենք ցաւում, որ այս տարին վերջին երեք տարիների շարունակութիւնն է եղել, և ուրիշ ոչինչ։— բ) Բայց դպրոցական ընդհանուր դրութեան անփոփոխութեան սկզբունքը չպէտք արգելք լինէր դպրոցների ուսուցման մասի մշակմանն ու յառաջադիմութեանը, որ սակայն հնարաւոր չեղաւ իրականացնել՝ մեզնից անկախ պատճառներով։

Ամենքի համար պարզ է, որ Ազգ. դպրոցները միշտ պէտք ունին, ի շարս եղած այլ ոյժերի, հայկական զանազան միջնակարգ ու բարձր դպրոցներում կրթուած պատրաստի և թարմ ոյժերի։ Այդ կարիքն աւելի զգալի եղաւ՝ անցեալ ուս. տարուայ դասատուներից ոմանց հեռանալուց յետոյ։ Դժբախտաբար դպր. Հոգաբարձութիւնը ընդառաջ չգնաց այս ակնյայտ կարիքին, թէպէտ նոյնիսկ այդ մասին իմ կողմից գրաւոր և հանգամանօրէն պատճառաբանուած առաջարկութիւն իսկ եղաւ։

գ) Ուսումնական մասի կատարելագործմանը քիչ չէ խանգարել նաև այն հանգամանքը, որ անցեալ տարուայ հեռացած դասատուներին փոխարինողներն — ընդհանուր առմամբ, և ոչ անհատօրէն չգերազանցեցին իրանց ուսուցչական յատկութիւններով նախորդներին։

Դպրոցների ներքին վիճակի մէջ էլ էական փոփոխութիւններ ու վայրուվերումներ չեն եղել՝ չնայած խռովայոյզ վիճակ ցոյց տուող սիմպտոմներին ու մի քանի էքսցէսներին։ Հարկ է այստեղ շեշտել, որ դպրոցների ուսուցչական կազմը մանկավարժական

սկզբունքային խնդիրներում տարաձայնութիւններ չի ունեցել, կամ գոնէ այդպիսի տարաձայնութիւններ ու հակառակ ձգտումներ երբէք չեն արտայայտուել մանկավարժական ժողովներում.—Դժբախտաբար մի քանի ոչ էական ու ընթացիկ խնդիրների շուրջ եղած տարաձայնութեանց արձագանքները շատ ուժգին թնդիւն ունեցան որոշ շրջաններում՝ միանգամայն մեզնից անկախ պատճառներով։

Այս ընդհանուր դիտողութիւններից յետոյ պատկերացնենք նախ՝ Գ.-Քանանեան մանկապարտէզի, ապա երեք դպրոցների դրութիւնը։

## Ա. Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Մանկապարտէզն ունեցել է երեք բաժանմունք—դասարան, որոնք իրանց սարք ու կարգով ընդհանրապէս գոհացուցիչ վիճակ ունէին։ Պէտք կայ սակայն գրասեղան-նստարանները փոփոխելու և նոր նիւթեր պատուիրելու արտասահմանից։ Մանկապարտէզի բակը փոքր է և խաղալու, գրեթէ, անյարմար։ Այս տարի բակում շինել տրուեց մի փոքրիկ պարտէզ, որ խնամւում էր մանկապարտէզի սաների ձեռքով։ — Բակում գտնուող խաղալեռնակը թէև չենթարկուեց փոփոխութեան, բայց ինքն իրան արեգակի ու անձրևի ազդեցութիւնից կերպարանափոխուելով՝ յարմար դարձաւ ոտքով վեր բարձրանալու և արագութեամբ վայր իջնելու համար։

Մանկապարտէզում այս տարի պաշտօնավարել են օր. օր. Մ. Սիմէոնեան, Ա. Դաւիթխանեան և Ե. Կիրակոսեան, որոնք վարել են նաև վերակացուութեան ու դաստիարակութեան պաշտօններ՝ իրանց դասարանական զբաղումների հետ միասին։

Մանկապարտէզի սաների ընդհանուր թիւն եղել է տարուայ սկզբին 118, յունուարին՝ 116, իսկ տարեվերջին 139, որոնցից 15 հոգին՝ փոքրութեան պատճառով՝ վիճակագրութեան մէջ ի նկատի չեն առնուած։ 124 սաներից 109-ը (87%) ջուղայեցիներ են, իսկ 15-ը (13%) օտար վայրերից։



101 հոգին (81%) գրագէտ հայրերի, իսկ 97 հոգին (80%) գրագէտ մայրերի զաւակներ են։ 116 հոգին (93,5%) ունին ծնողներ, իսկ 8 հոգին (6,5%) կիսով կամ լրիվին որբ են։

Մանկապարտէզում սաներն ընդունւում են 4 տարեկանից (լրացրած), իսկ դպրոցական բաժանմունքներն են անցնում 7 տարեկանից (լրացած)։ Սաների շարքի միջին թիւը մօտաւորապէս 6 է։

Երեխաների նիւթական վիճակն ընդհանրապէս աննախանձելի է։— Հարուստի զաւակներ են 9 հոգի (7%), միջ. կար. անձերի՝ 69 հոգի (56%,) չքաւորի՝ 27 (20%), աղքատի՝ 19 (17%)։

Ծնողների զբաղումներին համաձայն՝ այսպէս են բաժանւում—

| | | | |
|---|---|---|---|
| Քահանայի զաւակ | | 5 | (4 %) |
| Ուսուցչի | » | 4 | (3,25) |
| Արհեստաւորի | » | 26 | (19%) |
| Վաճառականի | » | 11 | (9%) |
| Գործակատարի | » | 18 | (14,5%) |
| Մշակի | » | 10 | (8%) |
| Ծառայի | » | 19 | (15%) |
| Գինեվաճառի | » | 3 | (2,5%) |
| Զանազան և անյայտ զբ. անձ. | | 24 | (20,5%) |
| | | 124 | 100% |

Չքաւոր սաներից 37ը (30%) ձրիաբար զգեստ են ստանում։ Դասաւանդման կանոնաւորութեան ու դիւրութեան նկատումով՝ բոլոր սաներին դասական պիտոյք տրւում է դպրոցից։

Այս տարի Մանկապարտէզի սաների բացակայութիւնը՝ համեմատած միւս տարիների հետ՝ քիչ է եղել. բացակայութեանց ժամերի ընդհանուր թիւն է 3198. մէկ սանի միջին հաշուով ընկնում է 25 ժամի բացակայութիւն։

Երեխաներն այս տարի էլ ունեցել են նոյն դասերն ու զբաղումներն՝ աննշան փոփոխութիւններով (տես 1912-1913

ուս. տ. տեղեկագիրը)։ Հաճոյքով պիտի տեսնենք, որ զբաղումները ոչ միայն մտքի զարգացմանն են նպաստել, այլ բովանդակ հոգու։ Ուրախութեամբ պիտի արձանագրենք երեխաների կենսուրախութիւնն ու աշխոյժութիւնը։

Կազմած վիճակագրութեան տուեալներին համաձայն՝ սաների ընդհանուր յառաջադիմութիւնը պիտի նկատել միջակից բարձր։

Դժբախտաբար միայն մէկ պատահութիւն ունեցան սաները՝ ծնողների առջև ցուցադրելու իրանց մանկական ձիրքերն ու յառաջադիմութիւնը. այդ միակ առիթը Նոր-տարուայ երեկոյթն էր, որում մանկ.-ի սաներին յատկացուած էր առանձին մի բաժին, որ հաճելիագոյնն էր իւր առանձնայատուկ բնոյթով։

## Բ. ԴՊՐՈՑՆԵՐ

Գ.-Քանանեան դպրոցն ունեցել է հետևեալ 11 դասարանները—

| | | |
|---|---|---|
| Ա. բաժ. հիմն. | Ա. բաժ. զուգ. | |
| Բ բաժ. » | Բ բաժ. » | Բ բաժ. պատր. |
| Գ բաժ. » | Գ » » | Գ » » |
| Ա. դաս. » | Ա. դաս. » | |
| Բ դաս. տղ. | | |

Վերակացութեան գործի յարմարութեան նկատումներով և դպր. շէնքերի սենեակների թուերի տարբերութեան պատճառով՝ յիշած դասարաններից Ա. բաժ. հիմն. և Ա. բաժ. զուգ. զետեղուած են եղել Ս.-Կատարինեան դպրոցի շէնքում, իսկ Գ բաժ. զուգ., Ա. դաս. հիմն. և Բ դաս. տղ. զետեղուած են եղել Կենտրոնական դպրոցի շէնքում։

Ս.-Կատարինեան դպրոցն ունեցել է Բ, Գ, Դ, Ե, ու Զ, դասարաններ թուով 5։ Դ, Ե, ու Զ, դասարաններում դըրուած են եղել հարկաւոր թուով նստարան—սեղաններ՝ Կենտրոնական դպրոցից միացեալ դասերին այդտեղ եկող աշակերտների համար։



Կենտրոնական դպրոցն ունեցել է 4 դասարան՝ Գ, Դ, Ե, ու Զ։

Դասարաններն, ինչպէս նախորդ տարիներում յայտնել եմ, լոյսի, տաքութեան ու օդաւէտման կողմից բարեյաջող պայմանների մէջ են։ Դասարանական—դասական պարագաների կարիքն է, որ դեռևս զգալի է։

## Գ. ՈՒՍՈՒՑՉՈՒԹԻՒՆ

### 1. Ուսուցչական փէրսոնէլ

Անցեալ տարուայ ուսուցիչների մասը այս տարի թողել է դպրոցները՝ իւրաքանչիւրն իւրոյն, առանձին պատճառներով։ Դժբախտաբար հանգամանքների բարդումով ու մեզնից անկախ պատճառներով ներկայ ուսումնական տարուայ Ա., կիսամեակում ուսուցչական կազմը լիակատար կերպարանք չունէր։—Մօտ երկու ամիս ակնկալում էինք Գ. ճեմարանաւարտ մի ուսուցչի, որ սակայն չեկաւ։ Հայերէնի ու ընդհ. պատմութեան շատ դասեր բաց մնացին։ Մէկ ամսի չափ հնարաւոր եղաւ այդ դասերի մի մասը եղած ուսուցիչներով մի կերպ կառավարել՝ ցնոր տնօրէնութիւն։ Այս և ուրիշ պատճառներով՝ այս տարի դասերի կրկին ու երեքկին վերաբաշխումներ կատարուեց։

Այս բոլորը չէր կարող յոռի կերպով չանդրադառնալ դպրոցների և՛ ուսումնական, և՛ բարոյական վիճակների վըրայ։ Վերջիվերջոյ այս ու այն կերպ յարմարեցումներից յետոյ՝ Զ դասարանում 4 ժամ ընդմիշտ բաց մնաց՝ յարմար ուսուցչի չգոյութեան պատճառով։

Պակաս յոռի չէր նաև ազդեցութիւնն այն փոփոխութիւնների, որոնք կատարուեցան տարուայ առաջին կիսամեակի ընթացքում—հետզհետէ զանազան պատճառներով դադարեցին դպրոց գալուց տ. Ծ. Քամարզարեան և պ. պ. Ռ. Գասպարեան ու Ղ. Մարտիրոսեան։ Նրանց փոխարինեցին օր. Աշխէն Դուռթեան, Տէր Համբարձում քհնյ. Վարդանեան և պ. Լ. Ղուկասեան։

Երկրորդ կիսամեակում վերջնականապէս հաստատուն կերպարանք ստացած կազմի ուսուցիչներն ու նրանց դասերի ցուցակը հետեւեալն է—

### 1. Աբգարեան պ. Ստեփան—25 ժամ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ալգեբրա | Դ դ. տղ. | 2 | Թուաբան. | Դ դ. տղ. | 2 |
| » | Դ դ. աղջ. | 2 | » | Դ դ. աղջ. | 2 |
| » | Ե դ. տղ. | 2 | » | Ե դ. տղ. | 1 |
| » | Ե դ. աղջ. | 2 | » | Ե դ. աղջ. | 1 |
| » | Զ դ. մ. | 2 | Տոմարակալ. | Զ դ. տղ. | 2 |
| Երկրաչափ. | Ե դ. տղ. | 2 | Անգլ. գրութ. | Գ բ. գ. | 1 |
| » | Ե դ. աղջ. | 2 | | | |
| » | Զ դ. մ. | 2 | | | |

### 2. Աբգարեան պ. Տիգրան—28 ժամ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հայերէն. | Ա դ. հ. | 5 | Նկարչ. | Ա դ. հ. | 2 |
| » | Ա դ. գ. | 5 | » | Ա դ. գ. | 2 |
| Նկարչ. | Գ դ. աղջ. | 1 | » | Գ բ. հ. | 2 |
| » | Գ դ. տղ. | 1 | » | Գ բ. գ. | 2 |
| » | Բ դ. աղջ. | 2 | » | Գ բ. պ. | 2 |
| » | Բ դ. տղ. | 2 | » | Բ բ. պ. | 2 |

### 3. Գերասիմեան պ. Արմենակ—20 ժամ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Դ դ. մ. | 4 | Բանահիւս. տեսութ. | Ե դ. մ. | 2 |
| » | Ե դ. մ. | 4 | Մանկավարժութիւն | Զ դ. մ. | 3 |
| » | Զ դ. մ. | 4 | Խմբ-երգ. | Ա-Զ դ. մ. | 3 |

Ծանօթ.— Դեկտեմբեր ամսից Զ դասարանում մէկ ժամ հայերէնից և մէկ ժամ մանկավարժութիւնից յատկացրել է «Հայ. գրակ. պատմութեան» գէթ մասամբ դասերը բաց մնալու չարիքը առաջն առնելու համար։

### 4. Գերասիմեան տ. Նուարդ—22 ժամ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ձեռագործ ու կարուձև | Գ դ. աղջ. | 2 | Տնային տնտ. | Զ դ. աղջ. | 2 |
| » » | Դ դ. աղջ. | 4 | Բն. պատմ. | Գ դ. աղջ. | 3 |
| » » | Ե դ. աղջ. | 4 | » » | Բ դ. աղջ. | 3 |
| » » | Զ դ. աղջ. | 4 | | | |



### 5. Դուրեան օր. Աշխէն—25 ժամ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Երգեցող | Բ բ. հ. | 2 | Ձեռագործ | Բ բ. հ. | 3 |
| » | Բ բ. գ. | 2 | » | Բ բ. պ. | 3 |
| » | Բ բ. պ. | 2 | » | Գ բ. պ. | 3 |
| » | Գ բ. հ. | 2 | Նկարչ. | Բ բ. հ. | 2 |
| » | Գ բ. պ. | 2 | » | Բ բ. գ. | 2 |
| | | | Իրազննութ. | Բ բ. պ. | 2 |

Ծանօթ.— Օր. Ա. Դուրեան փոխարինել է տ. Ծովինար Քամարզարեանին նոյեմբերի 28-ից։

### 6 Դուրեան պ. Եփրեմ—23 ժամ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հայրենագիտ. | Գ բ. հ. | 2 | Ռուսերէն | Գ դ. տղ. | 3 |
| » | Գ բ. գ. | 2 | » | Դ դ. տղ. | 3 |
| » | Գ բ. պ. | 2 | » | Ե դ. տղ. | 3 |
| Հայ. պատմ. | Ա դ. գ. | 2 | » | Զ դ. տղ. | 4 |
| » » | Բ դ. տղ. | 2 | | | |

### 7. Դուիթխանեան օր. Ագապիա—25 ժամ

Մանկապարտէզի (գլխաւորապէս Բ բաժ.) առարկաներից՝ 23 ժամ. այլև

| | | |
|---|---|---|
| Ընթերց. | Բ բ. հ. | 1 |
| » | Ա դ. գ. | 1 |

### 8. Զոհրաբեան օր. Իշխանուհի—25 ժամ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Թուաբանութ. | Գ բ. հ. | 5 | Իրազննութիւն | Գ բ. հ. | 2 |
| » | Գ բ. գ. | 5 | » | Գ բ. գ. | 2 |
| » | Գ բ. պ. | 5 | Գեղագր. | Գ բ. պ. | 1 |
| » | Բ բ. գ. | 5 | | | |

### 9. Զոհրաբեան օր. Նեկտարինէ—25 ժամ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ձեռագործ | Ա դ. գ. | 2 | Ձեռագործ | Գ դ. աղջ. | 2 |
| » | Բ դ. աղջ. | 2 | » | Գ բ. պ. | 3 |
| Թուաբան. | Բ բ. հ. | 5 | Հայերէն | Բ բ. հ. | 6 |
| » | Բ բ. պ. | 5 | | | |

### 10. Թումիկեան Տէր-Կարապետ քհնյ.—27 ժամ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կրօնագիտ. | Ա դ. հ. | 2 | Կրօնագիտ. | Բ բ. գ. | 2 |
| » | Ա դ. գ. | 2 | » | Բ բ. պ | 2 |
| » | Գ բ. հ. | 2 | Գեղագր. | Գ բ. հ. | 1 |
| » | Գ բ. գ. | 2 | Հայերէն | Գ բ. հ. | 5 |
| » | Գ բ. պ. | 2 | » | Գ բ. գ. | 5 |
| » | Բ բ. հ. | 2 | | | |

### 11. Իսրայէլեան օր. Եղիսաբեթ—25 ժամ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անգլ. պատմ. | Ե | դ. | տղ. | 2 | Անգլերէն | Բ | բ. | գ. | 3 |
| » » | Ե | դ. | աղջ. | 2 | » | Բ | դ. | աղջ. | 5 |
| Երկրաչափ. | Դ | դ. | տղ. | 1 | » | Գ | դ. | աղջ. | 4 |
| » | Դ | դ. | աղջ. | 1 | Թուաբ. | Ա | դ. | գ. | 4 |

Ծանօթ—Ապրիլ ամսից աղջ. Բ դասարանի 4 ժամը յանձնելով պ. Լ. Ղուկասեանին՝ օր. Ե. Իսրայէլեան ստանձնել է դրա փոխարէն Ա հ. դասարանի բնակ. պատմութեան 3 դասը։

### 12. Կարապետեան պ. Մկրտում—26 ժամ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անգլ. | Զ | դ. | մ. | 4 | Աշխարհ. | Բ | դ. | տղ. | 2 |
| » | Ե | դ. | տղ. | 4 | » | Ա | դ. | հ. | 2 |
| » | Դ | դ. | տղ. | 4 | Պարսկ. | Գ | բ. | գ. | 3 |
| » | Գ | դ. | տղ. | 4 | Թուաբ. | Ա | դ. | հ. | 3 |

Ծանօթ.— պ. Մ. Կարապետեան՝ անցեալ տարուայ վերջին հրաժարուած լինելով Հոկտեմբեր 25-ից է վերստանձնել իւր պաշտօնը։

### 13. Կիրակոսեան օր. Եղիսաբեթ—25 ժամ

Մանկապարտէզի (գլխաւորապէս Ա բաժ.) առարկաներից 22 ժամ. այլև

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընթերց. | Բ | բ. | պ. | 1 |
| Գրութ. | Բ | բ. | գ. | 1 |

### 14. Կիրակոսեան պ. Ստեփան—26 ժամ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Գ | դ. | աղջ. | 5 | Ընդհ. պատմ. | Գ | դ. | աղջ. | 2 |
| » | Գ | դ. | տղ. | 4 | » » | Գ | դ. | տղ. | 2 |
| Աշխարհ. | Գ | դ. | աղջ. | 2 | » » | Դ | դ. | մ. | 2 |
| » | Գ | դ. | տղ. | 2 | » » | Ե | դ. | մ. | 2 |
| » | Դ | դ. | մ. | 3 | Ընթերց. | Բ | դ. | տղ. | 1 |

### 15. Ղուկասեան պ. Լուկի—20 ժամ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Թուաբ. | Բ | դ. | տղ. | 4 | Հայոց պատմ. | Ա | դ. | հ. | 3 |
| » | Բ | դ. | աղջ. | 4 | Իրաւգն. | Բ | բ. | գ. | 2 |
| Աշխարհ. | Բ | դ. | աղջ. | 2 | » | Բ | բ. | պ. | 2 |
| » | Ա | դ. | գ. | 2 | Ընթերց. | Բ | դ. | աղջ. | 1 |

### 16. Միրզա Մահմադ—21 ժամ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պարսկ. | Գ | բ. | հ. | 3 | Պարսկ. | Դ | դ. | տղ. | 3 |
| » | Ա | դ. | հ. | 3 | » | Ե | դ. | տղ. | 3 |
| » | Բ | դ. | տղ. | 3 | » | Զ | դ. | տղ. | 3 |
| » | Գ | դ. | տղ. | 3 | | | | | |



### 17. Յարութիւնեան պ. Արմենակ—27 ժամ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Բ | դ. | տղ. | 5 | Ֆիզիկա | Դ | դ. | մ. | 3 |
| » | Բ | դ. | աղջ. | 5 | » | Ե | դ. | մ. | 3 |
| Բն. պատմ. | Բ | դ. | տղ. | 3 | » | Զ | դ. | մ. | 3 |
| « » | Գ | դ. | տղ. | 3 | Մարմնամ. | Ա-Զ | դ. | մ. | 2 |

### 18. Յովհաննիսեան Տէր-Եսայի քհնյ.—20 ժամ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կրօնագիտ. | Բ | դ. | տղ. | 2 | Հայոց պատմ. | Բ | դ. | աղջ. | 2 |
| » | Բ | դ. | աղջ. | 2 | » » | Գ | դ. | տղ. | 2 |
| » | Գ | դ. | տղ. | 2 | » » | Գ | դ. | աղջ. | 2 |
| » | Դ | դ. | աղջ. | 2 | » » | Դ | դ. | մ. | 2 |
| » և Եկ. պատ. | Դ | դ. | մ. | 2 | » » | Ե | դ. | մ. | 2 |

### 19. Շուքուրեան պ. Պօղոս—24 ժամ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անգլ. | Ա | դ. | գ. | 5 | Անգլ. | Բ | բ. | պ. | 3 |
| » | Գ | բ. | հ. | 5 | Գրութ. | Ա | դ. | գ. | 1 |
| » | Դ | բ. | պ. | 5 | » | Բ | բ. | հ. | 1 |
| » | Բ | բ. | հ. | 3 | » | Բ | բ. | պ. | 1 |

### 20. Սիմէոնեան օր. Համասփիւռ—23 ժամ

Աւանդել է Ա բաժանմունքի բոլոր առարկաները՝ մի մասը հիմնականում, միւս մասը զուգընթացում։

### 21 Սիմէոնեան օր. Մարիամ—24 ժամ

Աւանդել է Մանկապարտէզի (գլխաւորապէս Գ բաժ.) առարկաներից 23 ժամ. այլև 1 ժամ ընթերցանութիւն՝ Ա հիմն. դասարանում։

### 22. Վարդանեան Տէր Համբարձում քհնյ.—27 ժամ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Բ | բ. | գ. | 6 | Իրաւգն. | Գ | բ. | պ. | 2 |
| » | Բ | բ. | պ. | 6 | Անգլ. | Ա | դ. | հ. | 5 |
| » | Գ | բ. | պ. | 5 | Բն. պատմ. | Ա | դ. | գ. | 3 |

Ծանօթ.—Տէր-Համբարձում քահանան Նոյեմբեր 25-ից փոխարինել է պ. Ղ. Մարտիրոսեանին։

### 23. Վարդանեան օր. Մէրիխաթուն—24 ժամ

Աւանդել է Ա բաժանմունքի բոլոր առարկաները՝ մի մասը հիմնականում, միւս մասը զուգընթացում. այլև մէկ ժամ ընթերցանութիւն՝ Բ պ. բաժանմունքում։

### 24. Վարդանեան Տէր Վարդանի ճնյ.— 25 ժամ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անգլ. | Դ | դ. | աղջ. 4 | | Անգլ. | Ե | դ. | աղջ. 4 |
| » | Գ | բ. | զ. 5 | | Թուաբ. | Գ | դ. | տղ. 4 |
| » | Բ | դ. | տղ. 4 | | » | Գ | դ. | աղջ. 4 |

## 2. Պաշտօններ

ա) Փոխ տեսչութիւն: *Հոգաբարձական ժողովի որոշման համաձայն՝ Գէորգ-Քանանեան դպրոցի փոխ-տեսչի պաշտօնը յանձնուել է Տէր Վարդան քհնյ. Վարդանեանին։*

բ) Վերակացութիւն։ *Գէորգ-Քանանեան դպրոցի մշտական վերակացութիւնը կատարել է պ. Պ. Տուքուրեան, Ս.-Կատարինեան դպրոցինը՝ օր. Հ. Սիմէոնեան, իսկ կենտրոնական դպրոցինը՝ պ. Մ. Կարապետեան՝ հոկտեմբեր ամսից, իսկ մինչև հոկտեմբեր՝ պ. Ռ. Դասպարեան։ Երեք դպրոցներում էլ վերակացութեան գործը տարուել է բաւարար չափով։ Նպատակաւոր հանգամանք է եղել այն, որ երեք դպրոցներում (շէնքերում) աշակերտուհիները, համարեա թէ, հաւասար թուով են բաժանուած եղել։ Ս.-Կատարինեան դպրոցում հերթական օժանդակ վերակացութիւն են կատարել օր. օր. Ա. Դաւթեան, Մ. Վարդանեան, Ի. Ջոհրաբեան և Ե. Իսրայէլեան, պ. պ. Տ. Աբգարեան և Ս. Կիրակոսեան։*

գ) Դաստիարակութիւն: *Դասարանների անմիջական հսկողութեան, սաների բարոյական դաստիարակութեանը հետևելու, ինչպէս նաև դասարանական գրագրութիւններ ու այլ աշխատանքներ կատարելու համար՝ Մանկավարժական ժողովի կողմից իւրաքանչիւր դասարանի համար նշանակուած են եղել հետևեալ դաստիարակները—*

### Գ.-Քանանեան դպրոցում

| | | | |
|---|---|---|---|
| Ա | բ. | հ. | օր. Մ. Վարդանեան |
| Ա | բ. | զ. | օր. Հ. Սիմէոնեան |
| Բ. | բ. | հ. | օր. Ն. Ջոհրաբեան |
| Բ. | բ. | զ. | օր. Ա. Դաւթեան |



| | | | |
|---|---|---|---|
| Բ | բ. | պ. | Տէր Հ. քհնյ. Վարդանեան |
| Գ | բ. | հ. | Տէր Կ. քհնյ. Թումիկեան |
| Գ | բ. | զ. | պ. Լ. Ղուկասեան |
| Գ | բ. | պ. | օր. Ի. Ջոհրաբեան |
| Ա. | դ. | հ. | պ. Տ. Աբգարեան |
| Ա | դ. | զ. | պ. Պ. Տուքուրեան |
| Բ | դ. | տղ. | պ. Ս. Կիրակոսեան |

### Կենտրոնական դպրոցում

| | | |
|---|---|---|
| Գ | դ. | պ. Ե. Դաւթեան |
| Դ | դ. | պ. Ս. Աբգարեան |
| Ե | դ. | պ. Ա. Յարութիւնեան |
| Զ | դ. | պ. Մ. Կարապետեան |

### Ս.-Կատարինեան դպրոցում

| | | |
|---|---|---|
| Բ | դ. | օր. Ե. Իսրայէլեան |
| Դ | դ. | Տէր Վ. քհնյ. Վարդանեան |
| Դ | դ. | տ. Ն. Գերասիմեան |
| Ե | դ. | Տէր-Ե. քհնյ. Յովհաննիսեան |
| Զ | դ. | տ. Ն. Գերասիմեան |

դ) Զանազան պաշտօններ: *պ. Ս. Կիրակոսեան կատարել է Մանկավ. ժողովների ու տեսչական քարտուղարի պաշտօնը։- Տիկ. Ն. Գերասիմեան ղեկավարել է Աշ. միութիւնը։— պ. Ս. Աբգարեան կառավարել է դպր. գրավաճառանոցը։ — Դպրոցական գրադարանապետի պաշտօնն ստանձնել է Տէր-Կ. քհնյ. Թումիկեան։*

## 3. Ուսուցիչների

### Բացակայութիւնն ու աւելորդ պարապած դասերը

*Տարուայ ընթացքում հիւանդութեան, ծիսական գործի (քահանաները) և ուրիշ պատճառներով բացակայել են հետևեալ դասատուները, որոնց աւելորդ պարապած դասերն էլ նշանակում ենք այստեղ—*

| | | բացակայել է | աւելորդ պարապել |
|---|---|---|---|
| Աբգարեան | պ. Ստ. | 57 | 2 |
| » | պ. Տ. | 9 | — |
| Գերասիմեան | պ. Ս. | 8 | 10 |
| » | տ. Ն. | 46 | — |
| Դուլթեան | օր. Ս. | 16 | — |
| » | պ. Ե. | 10 | 3 |
| Դուլիթխանեան | օր. Ս. | 13 | — |
| Զոհրաբեան | օր. Ի. | 15 | — |
| » | օր. Ն. | 17 | 10 |
| Թումիկեան | Տէր Կ. ք. | 39 | — |
| Իսրայէլեան | օր. Ե. | 2 | 11 |
| Կարապետեան | պ. Մ. | 9 | — |
| Կիրակոսեան | պ. Ս. | 2 | 2 |
| Ղուկասեան | պ. Լ. | 2 | 4 |
| Միրզա Մահմադ | | 12 | — |
| Յարութիւնեան | պ. Ս. | 48 | — |
| Յովհաննիսեան | Տէր Ե. ք. | 75 | — |
| Շուքուրեան | պ. Պ. | 9 | 4 |
| Սիմէոնեան | օր. Հ. | $^1/_2$ | 2 |
| » | օր. Մ. | 32 | 10 |
| Վարդանեան | օր. Մ. | 25 | — |
| » | Տէր Հ. ք. | 41 | — |
| » | Տէր Վ. ք. | 23 | 1 |
| | Գումար | $510^1/_2$ | 59 |

## Դ. ՈՒՍՈՒՑՈՒՄ

### 1. Ուսուցման շրջան

Դասերն սկսուել են Սեպտ. 1-ից և տեւել են մինչև Յունիս 10-ը։ Զ դասարանի աշակերտուհիները՝ հարցաքննութեանց պատրաստուելու և աւարտական շարադրութիւններ գրելու ազատ ժամանակ ունենալու նպատակով՝ արձակուրդ են ստացել մայիս 1-ից, իսկ Ե դասարանցիք՝ վերջին



նկատումով՝ մայիս 25-ից։— Ըստ սովորականի ընդունուած տօն օրերին դպրոցներում դասեր չեն եղել։

Ուսուցման գործին կանոնաւոր ընթացք տալու և դաստիարակութեան գործը խելացի հիմունքների վրայ դնելու գործով զբաղուել է Մանկավարժական խորհուրդը։

### 2. Մանկավարժական խորհուրդ

Մանկավարժական Խորհուրդը լիակատար անկախութիւն ունենալով դպրոցների ուսումնական գործում՝ տարուայ ընթացքում գումարած իւր 21 ժողովներում զբաղուել է դիդակտիկական—մեթոդական խնդիրներով, փորձնական դասերի քննութեամբ, դաստիարակչական—դիսցիպլինային խնդիրներով, հանդէսների կազմակերպութեան կարգադրութիւններով և ուրիշ շատ դաստիարակչական ու ընթացիկ խնդիրներով։

### 3. Ծրագրի կիրարկումը

Ուսուցման գործի կանոնաւորութիւնը մեծ չափով կախուած է ծրագրի կիրարկումից։ Այս տարի՝ գլխաւորապէս յարմար դասատու չունենալու պատճառով՝ հնարաւոր չեղաւ անցնել ծրագրում որոշուած առարկաներից հետեւեալները՝ երկրաչ. ձեւագիտութիւն, քիմիա, ձայնագրութիւն և Անգլ. և Հնդկաստանի աշխարհագրութիւն։ Վերջին առարկան աւելորդ համարուեց աւանդել գործնական նկատումներով։

Ծրագրում յիշուած միւս առարկաներն աւանդուել են պահանջուած, իսկ մի քանի դէպքերում հնարաւոր, չափերով։

### 4. Գործածուող դասագրքեր

Ծրագրի անթերի գործադրութիւնը՝ բացի դասատուների կարողութիւնից ու ճիգերից՝ կախուած է նաև դպրոցում գործածուող դասագրքերի որակից։

Այս նկատումով աւելորդ չենք համարում թուել դպրոցներում գործածուող դասագրքերը—

### Կրօնագիտութիւն

| | |
|---|---|
| Ս. քհնյ. Սահակեան | Հին ուխտի |
| » » » | Նոր ուխտի |
| » » » | Գործք Առաքելոց |
| Գաբրիէլեան | Քրիստ. Վարդապետութիւն |

### Հայերէն

| | |
|---|---|
| Ա. Չիլինկ. և Տ. Ռստոմեան | Դասընկեր Ա, Բ, Գ |
| Ղ. Աղայեան | Մայրենի լեզու Գ, Դ |
| Գ. Վանցեան | Հայ հեղինակներ |
| Վ. Փափազեան և այլք | Հայ գրողներ, Ա, Բ, |

### Գրաբար

| | |
|---|---|
| Կ. Կոստանեան | Նախաշաւիղ |
| » » | Ծաղկաքաղ Ա |
| | Աւետարան |
| Եղիշէ | Պատմութիւն |

### Քերականութիւն

| | |
|---|---|
| Մ. Աբեղեան | Տարրական քերականութիւն |
| » » | Աշխարհաբարի քերակ. |
| Ա. Գերասիմեան | Աշխ. շարահիւսութ. (անտիպ) |
| Ս. Մալխասեան | Գրաբ. հոլով. և խոնարհ. |

### Հայոց պատմութիւն

| | |
|---|---|
| Ե. Խան. և Գ. Վարդ. | Նախապատմական մարդը |
| Գ. Վանցեան | Հայոց պատմութիւն |
| Ս. Պալասանեան | » » |

### Հայոց գրակ. պատմ.

| | |
|---|---|
| Վ. Փափազեան | Պատմ. հայ. գրակ. |

### Ընդհ. պատմութիւն

| | |
|---|---|
| Լ. Լավիս, թարգմ. Ա. Գեր. | Ընդհ. պատմութիւն |
| Պ. Վինոգրադով, թարգմ. Գ. Խ. | » » |

### Ընդհ. աշխարհագրութիւն

| | |
|---|---|
| Ա. Աբեղեան, | Ընդհ. աշխարհ. Ա, Բ, Գ |

### Բնակ. պատմութիւն

| | |
|---|---|
| Ս. Գիւզալեան | Բնակ. պատմութիւն |

### Թուաբանութիւն

| | |
|---|---|
| Զօհրաբեան | Դասագ. Թուաբ., Ա, Բ |
| Անգլ. մի քանի հեղինակներ | |



ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

### Ալգեբրա

| | |
|---|---|
| Տօդհէնտըր | Ալգեբրա |

### Երկրաչափութիւն

Իւքլիդ

### Տոմարակալութիւն

| | |
|---|---|
| Պրեսմըռ | Ձեռնարկ տոմարակալութեան |

### Բանահիւսութ. տեսութ.

Ա. Գերասիմեան-Ոճի և պրօզայի տես. (անտիպ)
Ծաղարբէկեան—Պօէզիայի տեսութիւն

### Մանկավարժութիւն

Կ. Սմիրնով, թարգմ. Ա. Գեր. Դասընթաց մանկավ.

### Անգլերէն

Ինգլիշ Ռիդըրս 1. 2. Ա. Բ. Գ. Դ. Ե.
» » Ե. (ուրիշ սերիայից)
Քերականութիւն

### Ֆրանսերէն

Մատիէ-ու-Խանի Նախաօսթնամէ Ա. Բ.

### Ռուսերէն

| | |
|---|---|
| Կոնխանիդի | Ժիվոյե սլովօ Ա. Բ. տարի |

Միւս առարկաներն անցել են կամ դասատուի կազմած տետրակներով, կամ բանաւոր կերպով (ստորին դասարաններում)։

15999

## 5. Ներքին կանոնադրութիւն

Ուսուցման և ընդհանրապէս ուսումնարանական գործի անայլմաք ընթացքը երաշխաւորող գործօններից մէկն էլ պէտք է համարել դպրոցական ներքին կանոնադրութիւնը։

Երկու տարի առաջ որդեն կազմուել և Մանկավարժ. Խորհուրդի ու Հոգաբարձական Ժողովի կողմից հաստատուել է մեր խմբագրած «Ներքին կանոնադրութիւնը»։ Բայց դպր. Հոգաբարձութիւնը՝ հակառակ իւր որոշումներին ու խոստումներին վերջի վերջոյ զլացաւ այդ գեթ իբրև նախագիծ տպելն էլ։

Պէտք չէ մոռանալ, որ ներքին կանոնադրութեան չգոյութիւնը ոչ միայն կասեցման, այլ նաև խանգարման կարող է ենթարկել դպրոցական գործը։

### 6. Փորձնական դասեր

Ուսուցման գործի կանոնաւորման տեսակէտից փորձնական դասերի ունեցած նշանակութեան մասին ուրիշ անգամներ խօսել ենք։

Մանկավարժական Խորհուրդը՝ միշտ համոզուած փորձնական դասերի դիդակտիքական, մեթոդական օգտակարութեան մէջ՝ իբր ժողովներում քննութեան նիւթ է դարձրել այս տարի տրուած հետեւեալ փորձնական դասերը—

| | | | |
|---|---|---|---|
| 1. օր. Հ. Սիմէոնեան, | Հայերէն | Ա. բաժ. | |
| 2. օր. Մ. Վարդանեան | Թուաբ. | Ա. բաժ. | |
| 3. օր. Ի. Զոհրաբեան | » | Գ. բաժ. | |
| 4. օր. Մ. Սիմէոնեան | Թուղթ ծալ. աշխ. | Բ. | » մանկ. |
| 5. օր. Ն. Զոհրաբեան | Թուաբ. | Բ. բաժ. | |
| 6. տ. Ն. Գերասիմեան | Բն. պատմ. | Բ. դաս. | |
| 7. պ. Ս. Աբգարեան | Ալգեբրա | Զ. դաս. | |
| 8. պ. Ս. Կիրակոսեան | Ընդհ. պատմ. | Գ. դաս. | |
| 9. օր. Ե. Իսրայէլեան | Երկրաչափ. | Դ. դաս. | |

### 7. Դպրոցական հանդէսներ

Դպրոցական հանդէսները բացի այն, որ կրթիչ ազդեցութիւն ունին աշակերտութեան վրայ, այլեւ օգտակար են գաւառական միջավայրի հասարակութեան համար, որը շատ քիչ կրթիչ բան է տեսնում իր հասարակական կեանքում։ Այդպիսի հանդէսները օգտակար են նաեւ, որ կապում են ընտանիքը դպրոցի հետ սերտ կապերով։

Մանկավարժական Խորհրդի կազմակերպած հանդէսները հետեւեալներն են—

1. Տարեմուտի երեկոյին կատարուել է մանկական երեկոյթ, որ իբր հետաքրքրական ու բազմակողմանի բովանդակութեամբ հաճելի է եղել հասարակութեան։

2. Վարդանանց տօնի առթիւ գրական հանդէս Մատենադարանում։

3. Մարտի 5-ին Թումանեանի հանդէս Նորաշէնում ու կից պուրակում։



Այս հրճուալից հանդէսի արժէքը պիտի բարձրանայ, երբ աշակերտները սովորեն իրենց տնկած ծառերը խնամել ու մեծացնել։—Ուրախալի է, որ այս տարուայ ծառերը՝ հեղեղի կատաղութիւնից մազապուրծ՝ կանգուն են՝ աճող կեանքի աներկբայ նշաններով։

4. Բացի այս հանդէսներից՝ Դպր. Հոգաբարձութեան ու Մանկավ. Խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպուել է նաեւ մի սգահանդէս՝ ողբացեալ Ս. Զաւարեանի, Ա. Քալանթարի ու Կ. Խատիսեանի յիշատակին։ Օրուայ առթիւ խօսել է Ն. Գերասիմեան։ Յաւուր պատշաճի կարդացել են նաեւ զանազան հատուածներ եւլն։

### 8. Երգեցիկ ու նուագող խմբեր

Պէտք է ասած, որ դպրոցական հանդէսներին մեծ շուք տուողը եղել են դպրոցներիս երգեցիկ ու երաժշտական խմբերը, որոնք իրենց կազմութեամբ ու կատարումներով նոյնն են եղել, ինչ որ անցեալ տարում։ Քառաձայն երգեցիկ խումբը ղեկավարել է Ա. Գերասիմեան, իսկ փողային նուագարանների խումբը՝ պ. Մ. Կարապետեան։

Երգեցիկ խումբը երգել է նաեւ Ամենափրկիչ վանքի Մայր տաճարում որոշ կիրակէ ու տօն օրերի, ինչպէս նաեւ առանձին տօն օրերի թաղական մի քանի եկեղեցիներում։

### 9. Կարգեր

Ոչ միայն բարոյական պարտքի գիտակցութիւնն է մղել Դպր. Վարչութեան յարգել դպր. բարերարների յիշատակը, այլեւ այն դաստիարակչական ազդեցութիւնը, որ նման կարգերն ունին մանաւանդ աշակերտութեան վրայ։

Բարերարների յիշատակին կատարուած կարգերն են—

1. Գ. Քանանեան դպրոցի բարերար հանգուցեալ Գէորգ Քանանեանի յիշատակը յարգելու համար դպրոցներիս ուսուցչութիւնն ու աշակերտութիւնը ամբողջ կազմով ներկայ են գտնուել Ս.-Գէորգ եկեղեցում մատուցուող Պատարագին և կատարուող հոգեհանգստեան արարողութեան։

2. Արհեստագիտական դպրոցի հիմնադիր և դպրոցների բարերար Առաքելեանների տոհմի առթիւ՝ Ս.-Աճաճին. եկեղեցում կատարուող պատարագին էլ ներկայ է եղել դպրոցի ուսուցչական կազմն ու աշակերտութիւնը։

3. Ս.-Կատարինեան դպրոցի հիմնադիր Մանուկ Յորդանանեանի տօնի առթիւ Ս.-Կատարինեան մենաստանի մատուռում մատուցուող պատարագին ու հոգեհանգստեան արարողութեան ներկայ են գտնուել դպր. ուսուցիչներն ու Ս.-Կատարինեան դպրոցի աշակերտուհիները։

## Ե. ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ

### 1. Աշակերտների թիւը

Երեք դպրոցների աշակերտների ընդհանուր թիւն տարուայ վերջին եղել է 428, որից 327-ը Գ.-Քանանեան, 44-ը Ս.-Կատարինեան և 57-ը Կենտրոնական դպրոցում։ Մանկապարտէզի 139 աշակերտներն էլ միասին հաշուելով՝ աշակերտութեան ընդհանուր թիւը լինում է 556։ Այս տարուայ նորեկների թիւն է 114, որի մեծագոյն մասը, մօտ 3/4-ը տեղիս կաթոլիկաց ու բողոքականաց դպրոցներից եկածներ են կազմում։

Երեք դպրոցների սաներից ծնողներ ունին 301 հոգի (70%), իսկ որբ են (լիովին կամ կիսով)՝ 227 հոգի (30%)։ 323 հոգին (75,5%) գրագէտ հայրերի, իսկ 250 հոգին 58,5%) գրագէտ մայրերի զաւակներ են։

404 հոգին (94,5%) երթևեկ են, իսկ 24 հոգին (5,5%) գիշերօթիկ։ 343 հոգին (80%) Ջուղայեցիներ են, իսկ 85 հոգին (20%) օտար վայրերից։

Դպրոցական համազգեստ ունին 390 հոգի (91,5%), չունին 38 հոգի (8,5%)։

Տղաների թիւն է 212 (49%), աղջիկներինը՝ 216 (51%)։

### 2. Նիւթական վիճակ

Դպրոցներիս աշակերտութեան նիւթական վիճակն ընդհանուր առմամբ աննախանձելի է, ինչպէս երևում է հե-



տևեալ ընդհանուր վիճակագրութիւնից։

428 սաներից հարուստի զաւակներ են 25 (6%), միջակ կար. տէր անձանց՝ 182 (42,25%), չքաւորի՝ 142 (33,25%), աղքատի՝ 79 (18,5%)։

Ձրիաբար զգեստ են ստանում 189 հոգի (44%), իսկ դասական պիտոյքներ՝ 227 հոգի (52,75%)։ — Ի դէպ, շնորհակալութիւն Ջուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան, որ բարեացակամութիւն է ունեցել դպրոցների չքաւոր աշակերտուհիներին ուսումնական պիտոյք հայթայթելու գործը իւր վրայ վերցնելու։

Ծնողների զբաղումներին համեմատ՝ դպրոցներիս աշակերտ-ուհիներն հետևեալ պատկերն են ներկայացնում —

| | | | |
|---|---|---|---|
| Քահանայի | զաւակ | 23 | (5,%) |
| Ուսուցչի | » | 14 | (3,25%) |
| Մանրավաճառի | » | 15 | (3,5%) |
| Արհեստաւորի | » | 118 | (27,5%) |
| Վաճառականի | » | 22 | (5%) |
| Գործակատարի | » | 36 | (8,25%) |
| Երկրագործի | » | 17 | (4%) |
| Մշակի | » | 15 | (3,5%) |
| Ծառայի | » | 86 | (20,5%) |
| Գինեվաճառի | » | 15 | (3,5%) |
| Զանազան անորոշ զբ. տ. անձ. | | 67 | (15,5%) |
| | | 428 | 100% |

Թերևս աշակերտութեան մեծամասնութեան նիւթական նեղ վիճակն է պատճառներից գլխաւորը, որ աշակերտ-ուհիների 85%-ը (363 հոգին) շատ կամ քիչ չափով տնային աշխատանք կատարելու ծանրաբեռնութիւնն ունին։

### 3. Բացակայութիւն

Նիւթական նեղ վիճակը և դրանց հետևանք հագուստի ու սննդի անկատարութիւններն ու թերսնման յաճախադէպ հիւանդութիւնները միշտ էլ պատճառ են դառնում աշակերտների [illegible] բացակայութեանց։

Երեք դպրոցների այս տարուայ աշակերտ-ուհիների բացակայութեանց ընդհանուր թիւն է 17,611, որ եթէ բաժանենք աշակերտութեան ընդհանուր թուի վրայ, (428), կ՚ստանանք 41, որ մի աշակերտի բացակայութեան միջին թիւն է։— Անցեալ տարուայ ընդհ. բացակայութեանց թիւն էր 32 440, իսկ իւրաքանչիւր մէկ աշակերտին միջին հաշուով ընկնում էր 78 բացակայութիւն։— Այս տարուայ բացակայութեանց ակնբախ քչութիւնը, կարծում եմ, ոչ միայն պատահականութեամբ, այլ և տարիների միակերպ դաստիարակչական ազդեցութիւններով պիտի բացատրել։

## 4. Ֆիզիքական կրթութիւն

Ինչպէս ուրիշ անգամներ արտայայտուել ենք, այժմ էլ պիտի շեշտենք, որ աշակերտութիւնը պիտի կրթուի բազմակողմանի կերպով. նրա հոգեկան բոլոր կարողութիւններին զուգընթաց պիտի մարզուի ու զարգանայ նաև նրա ֆիզիքական օրգանիզմը։

Դժբախտաբար մեր պայմանները շատ քիչ չափով են նպաստում ֆիզիքական կրթութեան գործին։ Եղած մարմնամարզութեան մենատան դասերը (միայն կենտրոնական դպրոցում), երբեմնի զբօսանքներն ու խաղերը շատ քիչ են ֆիզիքական դաստիարակութեան գործը կայուն հիմքերի վրայ դրուած համարելու համար։

## 4. Բարոյական դաստիարակութիւն

Աշակերտութեան բարոյական դաստիարակութեան բարդ և դժուարին գործը չի խարսխւում միայն կրօնի, բարոյագիտութեան դասերի վրայ։ Դա մեծապէս ազդւում է ուսուցիչների փոխադարձ ու դէպի աշակերտները ունեցած անհատական ու միանման վերաբերումից, նրանց ստեղծած ուսումնարանական բարոյական մթնոլորտից ու ընդհանրապէս դպրոցական ռէժիմից։ Աւելի ճիշտ՝ երեխաների բարոյական դաստիարակութեան գործը մեծ չափով կախ-



ուած է դպրոցական դիսցիպլինից։

Վերջինս մեր դպրոցներում չի եղել երբեք ոստիկանական—զինուորական, կամ աւելի ճիշտ, քմահաճօրէն ճնշող ու դաժան, այլ ձգտել է լինել խիստ, բառիս լաւագոյն իմաստով, և յարմարեցուած մանուկների հոգեկան ու ֆիզիքական բնութեան։

Մանկավարժական ժողովներում այս խնդրին նուիրուած խորհրդածութիւններն աննշան տեղ չեն գրաւում։

## 6. Մտաւոր յառաջադիմութիւն

Դպրոցներիս աշակերտութեան յառաջադիմութիւնը՝ անցեալ տարուայ հետ համեմատած մնացել է, գրեթէ միևնոյն աստիճանի վրայ։ Եթէ հին սիստեմով ընդունուած հնգային թուանշանական սիստեմով արտայայտուենք, պիտի տեսնենք, որ այս տարուայ աշակերտութեան ընդհ. յառաջադիմութեան միջին թիւը եղել է 3, 4, այսինքն լիովին բաւարար։— Եթէ չլինէին այս տարուայ ուսուցչական յաճախադէպ փոփոխութիւնները և ուրիշ կասեցնող հանգամանքներ, թերևս այդ թիւը հասնէր 3. 5-ի կամ նոյնիսկ 4 ի. լաւ)։

Աշակերտ-ուհիներից 145-ի ($33,_5\%$) տարեկան յառաջադիմութեան նիշերի միջին թիւն է լաւ, 187-ինը ($44\%$)՝ միջակ, իսկ 96 ինը ($22,_5\%$)՝ թոյլ։

Մէկ աշակերտի միջին հաշուով ընկնում են հետևեալ նիշերը – $3,_{75}$ լաւ, 4 միջակ, $2,_{25}$ թոյլ։ Ուրեմն գերակշռում է միջակը, իսկ լաւն էլ աւելի է թոյլից։

Յառաջադիմութեան միջակ ընթացքը բնորոշող երևոյթներից մէկն էլ այն է, որ աշակերտութեան $^1/_4$-ից աւելին Բ և Գ տարուայ մնացողներն են կազմում։ Այսպէս՝ 287 հոգին ($67\%$) առաջին տարին են նոյն դասարանում, 110 հոգին ($26\%$) երկրորդ տարին, իսկ 31 հոգին ($7\%$) Գ տարին։

Մենք զանց ենք առնում յիշել այստեղ նոյն ձևով գնահատուած ուշադրութեան, ջանասիրութեան և յիշողութեան վիճակագրութեանց թուերը, որոնք ընդհանրապէս

ուղիղ յարաբերական են ընդհ. յառաջադիմութեան վիճակագրութեան տուեալներին։

## 7. Յառաջադիմութեան նպաստող կողմնակի միջոցներ

Սխալ է կարծել, որ աշակերտութիւնը դպրոցում պաս-սիւ իւրացնողի դերում միայն պիտի լինի։ Սխալւում են նաև նրանք, որ կարծում են, թէ հնարաւոր չէ գրեթէ բոլոր դասերը անցնել այնպիսի եղանակներով, որ աշակերտները դասը իւրացնելու գործում շատ կամ քիչ չափով ակտիւ դերի մէջ լինին։ Աշակերտի մտաւոր ակտիւ կամ ներգործական, ինքնուրոյն գործունէութիւնը արդի մանկավարժութեան էական ու անխախտ հիմունքներից մէկն է։

Մտաւոր ակտիւ գործունէութեան շրջանակի մէջ բացի դասերից մտնում են նաև ինքնուրոյն ընթերցասիրութիւնն և աշակերտական հաւաքոյթներն ու լսարանները։

ա) Ընթերցանութիւն։ Ընթերցանութեան գործի կանոնաւորութիւնը նպաստող արտաքին պայմաններից գլխաւորը ընթերցանութեան յարմար գրքերի գոյութիւնն է։ Այս նկատումով այս տարի ևս Աշ. միութեան դրամներով բերուել է տպուած մօտ 160 կտոր գիրք, որ նախորդ տարիներում բերել տուածների նման կազմել են տուած և պահւում են դպրոցական գրադարանում։

Ընթերցանութեան գործի նպատակայարմարութեանը նպաստող ներքին պայմաններից գլխաւորը դասատուների հսկողութիւնն ու ղեկավարութիւնն են, որ դժբախտաբար ուսուցիչներից ոմանց զբաղմունքի և ուրիշ պատճառներով՝ գոհացուցիչ չափով չի կատարուել։

Ընթերցանութեամբ պարապում են, գրեթէ, բոլոր աշակերտ—ուհիները՝ Գ բաժ. սկսած։ Ամբողջ տարուայ ընթացքում կարդացուել է 3508 կտոր գիրք։ Միջին հաշուով մի աշակերտ կարդացել է 16 կտոր գիրք։

Ընթերցանութեան գործի ընդհանուր դրութիւնը անցեալ տարուան նման է։



### բ) Աշակերտական լսարաններ։

Դպրոցներիս բարձր դասարանների (Դ, Ե, Զ) Աշակերտական միութիւնը տարուայ մէջ երբեմն ունեցել է հաւաքումներ, որոնց գլխաւոր զբաղումը եղել են՝ իրանց մատչելի ու յարմար նիւթերի մասին եղած դասախօսութիւններն ու սրանց շուրջը եղած կարծիքների փոխանակութիւնները։

Դժբախտաբար այս երկու կողմնակի հանգամանքների օժանդակութեամբ հանդերձ՝ դպրոցներիս աշակերտութիւնը մեծ մասով իւր ընդհանուր զարգացումով դեռ ևս նախանձելի վիճակ չունի։

## 7. Հարցաքննութիւններ

Ինչպէս նախորդ երեք տարիներում, այս տարի էլ Մանկավ. Խորհուրդը դէմ լինելով ձևական քննութիւններին՝ ունեցել է միայն դասարանական հարցաքննութիւններ՝ դասարաններում աւարտուող առարկաներից։ Այս ձևի հարցաքննութիւնների նպատակը եղել է մէկ կողմից՝ ամփոփել տալ աշակերտների անցած գիտելիքները, միւս կողմից՝ մի պարզ կոնտրոլով հասկացողութիւն կազմել աւարտուող առարկաներն ինչ չափով իւրացրած լինելու մասին։

Հարցաքննութիւնների ցուցակը հետևեալն է—

| Առարկայ | Դասարան | Դասատու |
|---|---|---|
| 1. Իրազննութիւն | Բ բ. հիմն. | օր. Ի Զոհրաբեան |
| 2. » | Բ բ. դ. | » » » |
| 3. » | Գ բ. պ. | Տէր-Հ. քհնյ. Վարդ. |
| 4. Հայրենագիտութիւն | Գ բ. հ. | պ. Ե. Դաւթեան |
| 5. » | Բ բ. դ. | » » » |
| 6. » | Գ բ. պ. | » » » |
| 7. Բնական պատմ. | Գ դ. տղ. | պ. Ա. Յարութիւնեան |
| 8. » » | Գ դ. աղջ. | տ. Ն. Գերասիմեան |
| 9. Կրօն. և եկեղ. պատմ. | Դ դ. մ. | Տէր-Ե. քհնյ. Յովհաննն. |
| 10. Աշխարհագրութիւն | Դ դ. մ. | պ. Ս. Կիրակոսեան |
| Անգլ. պատմութիւն | Ե դ. տղ. | օր. Ե. Իսրայէլեան |
| » » | Ե դ. աղջ. | » » » |

| Առարկայ | Դասարան | Դասատու |
|---|---|---|
| Բանաստեղծ. տեսութիւն | Ե դ. մ. | պ. Ա. Գերասիմեա[ն] |
| Հայոց պատմ. | Ե դ. մ. | Տէր-Ե. քհնյ. Յովհանն. |
| Թուաբանութիւն | Ե դ. տղ. | պ. Ս. Աբգարեան |
| » | Ե դ. աղջ. | » » » |
| Հայերէն | Զ դ. մ. | պ. Ա. Գերասիմեան |
| Հայոց գրակ. պատմ. | Զ դ. մ. | » » » |
| Անգլերէն | Զ դ. մ. | պ. Մ. Կարապետեան |
| Պարսկերէն | Զ դ. տղ. | Միրզա Մահմադ |
| Առողջապահութիւն | Զ դ. աղջ. | տ. Ն. Գերասիմեան |
| Ալգեբրա | Զ դ. մ. | պ. Ս. Աբգարեան |
| Երկրաչափութիւն | » » » | » » » |
| Ռուսերէն | Զ դ. տղ. | պ. Ն. Դաւթեան |
| Մանկավարժութիւն | Զ դ. մ. | պ. Ա. Գերասիմեան |
| Ֆիզիկա | Զ դ. մ. | պ. Ա. Յարութիւնեան |
| Տնտեսագիտութիւն | Զ դ. տղ. | պ. Ս. Աբգարեան |

Հարցաքննութեանց ընդհ. արդիւնքը վստահութեամբ կարելի է գոհացուցիչ համարել։

## 8. Փոխադրութիւններ

Աշակերտների փոխադրութիւնները կատարելիս Մանկավ. Խորհուրդը չէ հիմնուել հարցաքննութեանց վրայ, այլ ընդհանրապէս սաների տարեկան յառաջադիմութեան վրայ՝ իւրաքանչիւր դասարանի համար առանձին նորմա սահմանելով։

Այս տարի փոխադրուողներն աւելի մեծ տոկոս են կազմում, քան նախորդ տարիներինը։ 428 սաներից փոխադրւում են 289-ը ($67,_{5}\,{}^{0}/_{0}$), մնում են 131-ը ($30,_{75}\,{}^{0}/_{0}$), վերաքննելի են 8 ($1,_{75}\,{}^{0}/_{0}$)։

Մենք դիտմամբ խուսափում ենք իւրաքանչիւր դպրոցի վերաբերմամբ եղած առանձին թուերը մէջ բերելուց՝ թողնելով այդ տեղեկագրին կցած տպուելիք վիճակացոյցի մէջ։ Եթէ մէջ բերենք պիտի տեսնենք, որ յառաջադիմութեամբ ու փոխադրութեամբ առաջին տեղը գրաւում է Կենտրոնական դպրոցը, ապա՝ Ս.-Կատարինեան, վերջում՝ Գ.-Քանանեան։ Այս երևոյթը բացի հասակների տարբերութեանց



պատճառից՝ ունի նաև այլ պատճառներ, որոնք այժմ քննելու հնարաւորութիւնը չունենք։

## 9. Ընթացաւարտներ

Այս տարի Կենտրոնական և Ս.-Կատարինեան դպրոցների Զ դասարաններն աւարտում են 12 հոգի՝ 9 տղայ, 3 աղջիկ։

Ընթացաւարտներն իրանց յառաջադիմութեան համաձայն՝ ստանում են հետևեալ վկայականները—

1. Ասլանեան Յարութիւն Ա կարգի
2. Բաբախանեան Արշակ Ա »
3. Էլիազեան Յովսէփ Բ »
4. Հախվէրդեան Վարդան Ա »
5. Ղարիբջան Յովհաննէս Ա »
6. Միքայէլեան Յովհաննէս Գ »
7. Յովհաննիսեան Յովսէփ Ա »
8. Ստեփաննոսեան Նարայր Ա »
9. Տէր-Գալստեան Մաթոսաղա Բ »
10. Խաչիկեան Իշխանուհի Բ »
11. Խաչիկեան Լուսաբեր Ա »
12. Տէր-Նիկողայոսեան Աստղիկ Գ »

Վերջին քառամեակի, մեր շրջանի, առաջին ընթացաւարտները (1911-1912) միայն երկրորդ ու երրորդ կարգի վկայականներ են ստացել. թէպէտ կային այնպիսիները, որոնք, եթէ նախորդ դասարաններում շատ կարևոր առարկաներ անցած չլինելու անպատեհութիւնը չլինէր, կարող էին Ա կարգի էլ ստանալ։ 1912-1913 ուս. տարեշրջանում Ա կարգի վկայական ստացել են 2 հոգի ($33\,{}^{0}/_{0}$), իսկ այս տարի 8 հոգի ($66\,{}^{0}/_{0}$)։

Այս տարուայ ընթացաւարտների ներկայացրած աւարտական շարադրութիւններն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են եղել, մինչդեռ անցեալ տարուանները՝ միջակ, իսկ նախանցեալ տարուանները՝ գրեթէ թոյլ։

Ներկայացրած աւարտական շարադրութիւնները հետեւեալներն են—

1. Բաքախանեան Արշակ, Ն.-Ջուղայի համառօտ պատմութ.
2. Ասլանեան Յարութիւն, Ֆրանսական մեծ յեղափոխութ.
3. Եղիազեան Յովսէփ, Հայկական հարցի պատմութիւնը
4. Հախվերդեան Վարդան, Շահ-Աբաս Մեծ և հայերի գաղթը
5. Ղարիբեան Յովհաննէս, » » » » » »
6. Միքայէլեան Յովհաննէս, Միք. Նալբանդեան
7. Յովհաննիսեան Յովսէփ, Կրօնական պատերազմներ
8. Ստեփաննոսեան Նորայր, Իսրայէլ Օրի
9. Տէր-Գալստեան Մաթուսաղա. Ս. Սահակ և Ս. Մաշտոց
10. Խաչիկեան Իշխանուհի. Հայոց տառերի գիւտը
11. Խաչիկեան Լուսաբեր, Խաչ. Աբովեան
12. Տէր-Նիկողայոսեան Աստղիկ, » »

Բացի այս շարադրութիւններից գրել են նաև յանպատրաստից շարադրութիւններ՝ տարբեր նիւթերի մասին: Աւարտական շարադրութիւններն գոհացուցիչ են եղել աւելի շատ նիւթի մշակութեամբ, իսկ յանպատրաստից շարադրութիւնները՝ լեզուի համեմատական մաքրութեամբ:

Մանկավարժութեան դասատուի հսկողութեան ներքոյ ընթացաւարտները Մայիս ամսի մէջ տուել են հետեւեալ փորձնական դասերը—

1. Ասլանեան Յարութիւն, Հայրենագիտութիւն Գ բ.
2. Բաքախանեան Արշակ, Կրօնագիտութիւն, Գ բ.
3. Եղիազեան Յովսէփ, Հայերէն, Բ բ.
4. Հախվերդեան Վարդան, Կրօնագիտութիւն, Գ բ.
5. Ղարիբեան Յովհաննէս, Հայերէն, Գ բ.
6. Միքայէլեան Յովհաննէս, Անգլերէն, Գ բ.
7. Յովհաննիսեան Յովսէփ, Իրագննութիւն. Բ բ.
8. Ստեփաննոսեան Նորայր, Թուաբանութիւն, Գ բ.
9. Տէր-Գալստեան Մաթուսաղա, » Բ բ.
10. Խաչիկեան Իշխանուհի Անգլերէն, Բ բ.



11. Խաչիկեան Լուսաբեր, Թուաբանութիւն, Բ բ.
12. Տէր-Նիկողայոսեան Աստղիկ, Հայերէն, Ա բ.

Մանկավարժութեան դասատուն սկզբում տուել է օրինակելի մի դաս հայերէնից՝ Ա բաժանմունքում:

Տեսուչ դպրոցների՝ Ա. ԳԵՐԱՍԻՄԵԱՆ

15 յունիսի, 1914 թ.
Ջուղա—Սպահան

| Գաւառներ | աշակերտների թիւը | | | | | | | | քանի՞սն են որբ (մօրից, կամ հօրից) | % | ծնողներէ — | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | աշակերտների ընդհանուր թիւը | տղաների թիւը | % | աղջիկների թիւը | % | աշակերտների տարիքի միջին թիւը | քանի՞սն ունին ծնողներ | % | | | քանի՞սի հայրն է քահանայ | % | քանի՞սի հայրն է ուսուցիչ | % | քանի՞սի հայրն է մանրավաճառ | % | քանի՞սի հայրն է արհեստաւոր | % | | |
| Մանկայ. | 124 | 63 | 51 | 61 | 49 | 6 | 116 | 93,5 | 8 | 6,5 | 5 | 4 | 4 | 3,25 | 4 | 3,25 | 26 | 19 | | |
| չհաշուածներ | ×15<br>139 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Գ.-Քանան. | 327 | 168 | 51,5 | 159 | 48,5 | 10,25 | 225 | 68,75 | 102 | 31,25 | 17 | 5,25 | 9 | 2,75 | 10 | 3 | 84 | 25,75 | | |
| Կենտրոնական | 44 | 44 | 100 | — | — | 16,5 | 35 | 79,5 | 9 | 20,5 | 3 | 6,75 | 1 | 2,25 | 3 | 6,75 | 14 | 32 | | |
| Ա.-Կասար. | 57 | — | — | 57 | 100 | 15 | 41 | 72 | 16 | 28 | 3 | 5 | 4 | 6,75 | 2 | 3,5 | 20 | 35 | | |
| համագումար | 428 | 212 | 49 | 216 | 51 | 11,5 | 301 | 70 | 127 | 30 | 23 | 5,5 | 14 | 3,25 | 15 | 3,5 | 118 | 27,5 | | |

(շարունակ.)

(շարունակ.)

| ր | ի | | | զ բ ա ղ ո ւ մ — | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանիսի՛ հայրն է եղել վաճառական | % | Քանիսի՛ հայրն է եղել գործակատար | % | Քանիսի՛ հայրն է եղել երկրագործ | % | Քանիսի՛ հայրն է եղել մշակ (օրականով) | % | Քանիսի՛ հայրն է եղել ծառայ | % |
| 11 | 9 | 18 | 14,5 | — | — | 10 | 8 | 19 | 15 |
| 16 | 5 | 28 | 8,5 | 13 | 4 | 14 | 4,25 | 72 | 22 |
| 1 | 2,25 | 5 | 11 | 4 | 9 | — | — | 4 | 9 |
| 5 | 8,75 | 3 | 5 | — | — | 1 | 1,75 | 10 | 17,5 |
| 22 | 5 | 36 | 8,25 | 17 | 4 | 15 | 3,5 | 86 | 20,75 |

(շարունակ.)



| ն ե ր ը | | | | Ծնողների գրագիտութ. | | | | Նիւթա- | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանիսի՛ հայրն է եղել գինեվաճառ | % | Քանիսի՛ հայրն է անգործ, կամ ուրիշ զբաղմունքով | % | Քանիսի՛ հայրն է եղել գրագէտ | % | Քանիսի՛ մայրն է եղել գրագէտ | % | Քանիսն՛ են հարուստ | % |
| 3 | 2,5 | 24 | 20,5 | 101 | 81 | 97 | 80 | 9 | 7 |
| 13 | 4 | 51 | 15,5 | 237 | 72,5 | 196 | 60 | 16 | 5 |
| — | — | 9 | 21 | 38 | 86,5 | 1,5 | 34,25 | — | — |
| 2 | 3,5 | 7 | 13 | 48 | 84 | 39 | 68,5 | 9 | 15,5 |
| 15 | 3,5 | 67 | 15,5 | 323 | 75,5 | 250 | 58,5 | 25 | 6 |

(շարունակ.)

| կ ա ն վ ի ճ ա կ | | | | | | թոշակառութիւն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| քանի°ն են ունեցող միջակ | % | քանի°ն են ունեցող չքաւոր | % | քանի°ն են ունեցող աղքատ | % | քանի°ն են ունեցող թոշակառու | % | քանի°ն են ունեցող ձրիավարժ | % |
| 69 | 56 | 27 | 20 | 19 | 17 | — | — | — | — |
| 125 | 38,25 | 109 | 33,25 | 77 | 23,5 | — | — | 327 | 100 |
| 26 | 59 | 17 | 39 | 1 | 2 | — | — | — | — |
| 31 | 54 | 16 | 28,75 | 1 | 1,75 | — | — | — | — |
| 182 | 42,25 | 142 | 33,25 | 79 | 18,5 | — | — | 48 | 100 |

(շարունակ.)



| Նպաստ ստացողներ | | | | երթեւեկ ու գիշերօթիկ | | | | որբ — | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| քանի°ն են ունեցող ձրիաբար զգեստ ստացող | % | քանի°ն են ունեցող ձրիաբ. դաս. տետ. ստացող | % | քանի°ն են ունեցող երթեւեկ | % | քանի°ն են ունեցող գիշերօթիկ | % | քանի°ն են ունեցող ծուռայեցի | % |
| 37 | 30 | 124 | 100 | 124 | 100 | — | — | 109 | 87 |
| 157 | 48 | 183 | 56 | 318 | 97,25 | 9 | 2,75 | 262 | 80 |
| 19 | 46 | 25 | 57 | 32 | 73 | 12 | 27 | 29 | 66 |
| 13 | 22,5 | 19 | 33,25 | 54 | 94,75 | 3 | 5,25 | 52 | 91,25 |
| 189 | 44 | 227 | 52,75 | 404 | 94,5 | 24 | 5,5 | 343 | 80 |

(շարունակ.)

| դացի | | առողջական | ընդհանուր — | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանի՞սն են օտար վայրերից | % | Քանիսի՞ առողջութիւնն է լաւ | % | Քանիսի՞ առողջութիւնն է միջակ | % | Քանիսի՞ առողջութիւնն է թոյլ | % | Ուս. տար. քանի՞ հոգի են հիւանդացել | % |
| 15 | 13 | 106 | 85 | 18 | 15 | — | — | 51 | 41 |
| 65 | 20 | 247 | 75,5 | 65 | 19,75 | 15 | 4,75 | 176 | 53,75 |
| 15 | 34 | 25 | 57 | 19 | 43 | — | — | 23 | 52 |
| 5 | 8,75 | 41 | 72,5 | 13 | 22,25 | 3 | 5,25 | 22 | 36,75 |
| 85 | 20 | 313 | 73 | 97 | 23 | 18 | 4 | 221 | 51,5 |

(շարունակ.)



| վ ի ճ ա կ | | | | | | ընթերցանութիւն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հիւանդութեան քանի՞ դէպք է եղել | Միջին թւով օրական քանի՞ ժամ են քնում | Քանի՞սի ծաղիկն է պատուաստած | % | Քանիսի՞ ծաղիկը չէ պատուաստած | % | Քանի՞սն են ընթերցանութ. պարապում | % | Դասաւանդ. քանի՞ գիրք է կարդացել (միջին թիւ) | ամբողջ դաս. քանի՞ հատ գիրք է կարդացել |
| 76 | 10 | 124 | 100 | — | — | — | — | — | — |
| 331 | 8,75 | 298 | 91 | 29 | 9 | 172 | 55 | 10 | 1669 |
| 54 | 8 | 88 | 86,5 | 6 | 13,5 | 44 | 100 | 26 | 1157 |
| 112 | 8 | 53 | 93 | 4 | 7 | 57 | 100 | 12 | 682 |
| 497 | 8,25 | 889 | 90,25 | 39 | 9,75 | 273 | 63,75 | 16 | 3508 |

(շարունակ.)

| Տնային աշխատանք | | Յառաջադիմութիւն | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանի՞սն են տնային աշխատանք կատար. | % | Քանի՞ աշ. յառ. նշանի միջինն է լաւ | % | Քանիսի՞ աշ. յառ. նշանի միջինն է միջակ | % | Քանիսի՞ աշ. յառ. նշանի միջինն է թոյլ | % | Մէկ աշակերտի միջին թուով ի՞նչ նշաններ են ընկնում — Քանի՞ լաւ, քանի՞ միջակ, քանի՞ թոյլ |
| — | — | 62 | 50 | 47 | 10 | 15 | 10 | |
| 272 | 83 | 98 | 30 | 135 | 11,25 | 94 | 28,75 | 2,75 լ. 3,75 մ. 2,75 թ |
| 34 | 77,5 | 23 | 52 | 20 | 46 | 1 | 2 | 6,75 լ. 4,75 մ. 0,5 թ |
| 57 | 100 | 24 | 44,25 | 32 | 54 | 1 | 1,75 | 5,75 լ. 3,75 մ. 1 թ |
| 363 | 85 | 145 | 33,5 | 187 | 44 | 96 | 22,5 | 3,75 լ. 4 մ. 2,25 թ. |

(շարունակ.)



| Վարք | | Յիշողութիւն | | | | | | Ջանա- | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանիսի՞ վարքն է լաւ | % | Քանիսի՞ յիշողութիւնն է լաւ | % | Քանիսի՞ յիշողութիւնն է միջակ | % | Քանիսի՞ յիշողութիւնն է թոյլ | % | Քանիսի՞ ջանասիրութիւնն է լաւ | % |
| 124 | 10 | | — | — | — | — | — | — | — |
| 320 | 97,75 | 116 | 35,5 | 146 | 44,75 | 65 | 19,75 | 103 | 31,5 |
| 44 | 100 | 27 | 61 | 17 | 39 | — | — | 27 | 61 |
| 57 | 100 | 27 | 47,5 | 30 | 52,5 | — | — | 36 | 63 |
| 421 | 98,25 | 170 | 39,75 | 193 | 45 | 65 | 15,25 | 166 | 38,75 |

(շարունակ.)

| Սիրութիւն | | | | Ուշադրութիւն | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանիսի՞ զանազան առարկաներն է միջակ | % | Քանիսի՞ ջանասիրութիւնն է լաւ | % | Քանիսի՞ ուշադրութիւնն է լաւ | % | Քանիսի՞ ուշադրութիւնն է միջակ | % | Քանիսի՞ ուշադրութիւնն է վատ | % |
| — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 134 | 41 | 90 | 27,5 | 105 | 22,25 | 169 | 51,5 | 53 | 16,25 |
| 15 | 34,5 | 2 | 4,5 | 27 | 61 | 17 | 39 | — | — |
| 21 | 37 | — | — | 39 | 66,5 | 8 | 33,5 | — | — |
| 170 | 39,75 | 92 | 2[illegible] | 171 | 40 | 204 | 47,75 | 53 | 12,25 |

(Շարունակ.)



| Բացակայութիւն | | Քանիներորդ տարին են նոյն դասարանում | | | | | | Համազգեստ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դպրոցի բացակայութ. ընդհ. թիւը | Մի աշակերտ միջին հաշուով քանի՞ դաս է բացակայել | Քանի՞սն են Ա տարին | % | Քանի՞սն են Բ տարին | % | Քանի՞սն են Գ տարին | % | Քանի՞ հոգի համազգեստ ունին | % |
| 3198 | 25 | 97 | 78 | 26 | 21 | 1 | 1 | 113 | 91 |
| 14167 | 41 | 196 | 60 | 100 | 30,5 | 31 | 9,5 | 297 | 81 |
| 680 | 14 | 42 | 95,5 | 2 | 4,5 | — | — | 37 | 84 |
| 2814 | 49 | 49 | 86 | 8 | 14 | — | — | 56 | 98,75 |
| 17611 | 41 | 287 | 67 | 110 | 26 | 31 | 7 | 390 | 91,25 |

(Շարունակելի.)

| փոխադրութիւն | | | | | | | | աշակերտների ընդհ. թիւը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանի՞սն են փոխադրւում | % | Քանի՞սն են մնում | % | Քանի՞սն են վերաքննելի | % | Քանի՞սն են արձակւում | % | սեպտեմբերին | յունուարին | յունիս 1-ին |
| 98 | 78 | 26 | 22 | — | — | — | — | 118 | 116 | 124 |
| | | | | | | | | | | +15 |
| | | | | | | | | | | 139 |
| 201 | 61,5 | 125 | 38,25 | 1 | 0,25 | — | — | 322 | 336 | 327 |
| 39 | 88,5 | 3 | 6,5 | 2 | 5 | — | — | 45 | 44 | 44 |
| 49 | 86 | 3 | 5,25 | 5 | 8,75 | — | — | 58 | 59 | 57 |
| 289 | 67,5 | 131 | 30,75 | 8 | 1,75 | — | — | 425 | 439 | 428 |
| | | | | | | | | | | 189 |
| | | | | | | | | | | 567 |



# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ, ԳԷՈՐԳ—ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ։

## 1913—1914 Թ.

Հոգաբարձութիւնս սոյն 1913—1914 ուսում. տարեշրջանում ամեն շաբաթ ունեցել է իր հերթական ժողովները, ընդ ամենը՝ 57 նիստ, նուիրուած ուսուցչական կազմի լրացման, դպրոցների բիւջէին, արհեստագիտական ճիւղերին և գիւղերի ու կալուածքների կառավարութեան։

## ԲԻՒՏՃԷ

Դպրոցներս սոյն տարեշրջանում ունեցել են ընդ ամենը 93791 ղր. 90 ս. մուտք և 93101 ղր. 30 ս. ելք։ Այս տարի, չնայելով որ ուսուցիչ-վարժուհիների ռոճիկների վրայ եղան անհրաժեշտ աւելացումներ, այնու ամենայնիւ ուրախ ենք յայտնելու, որ հնարաւորութիւն ունեցանք վերադարձնել նաև Յովսէփ Պօղոսխանեան Բարեգործութեանց Աւանդին պարտք մնացած 500. թուման գումարը և Ս. Ամենափրկչեան Հոգևոր դպրոցի 200 թումանը։

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹՈՇԱԿ

Հոգաբարձութիւնս սկզբունքով համամիտ գտնուելով կարողաւոր աշակերտ-աշակերտուհիներից դպրոցական թոշակ ստանալուն, այս տարի որոշ պատճառներով ստիպուած եղաւ դադարեցնել գանձումը, սակայն առաջիկայ ուսումնական տարուանից դարձեալ մտցնելու է թոշակի դրութիւնը և լիայոյս է որ մեր դպրոցների աշակերտութեան կարողաւոր ծնողները չեն զլանալ այդ չնչին տուրքը վճարելով

նպաստել մեր ազգային երկսեռ դպրոցներին, որոնց նիւթական ապահով դրութիւնը բոլորիս ջերմ ցանկութիւնն է։

## ՄԵԾ. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊՕՂՈՍ ԸՆԿ. ՆՊԱՍՏԸ

Մեծարգոյ պարոնայք Ստեփաննոս Պօղոս ընկերութիւնից Հոգաբարձութիւնս շարունակաբար ստացել է տարեկան 200 անգլ. ոսկու նպաստը, որին և հրապարակաւ յայտնում է իր խորին շնորհակալութիւնը և լիայոյս է որ նոյն Պատ. Ընկերութեան միջոցով ապագայում ևս բախտ կունենայ իրագործուած տեսնել Կալկաթայում հանգանակուած 120 հազար ռուփու գումարը մեր ազգ. երկսեռ դպրոցներին յատկացնելու խոստումը։

## ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ Ս. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆՊԱՍՏԸ

Ինչպէս անցեալ տարուայ տեղեկագրից յայտնի է, տեղիս Ս. եկեղեցիների կողմից տարեկան որոշ նպաստ է յատկացրուած յօգուտ մեր ազգ. երկսեռ դպրոցներին, և դրանցից մեծ մասը մնացել էին անվճար։ Այս տարի եկեղեցիների վարչութիւններից ոմանք վճարեցին. իսկ յարգ. չը վճարողներն ևս խոստացել են պատրաստի գումար ունենալուն պէս անպատճառ տալ նշանակուած նպաստը։

## ԲԱՏԱՒԻԱՅԻ ՀԱՅ ԱԶԳ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏԸ

Հոգաբարձութիւնս հրապարակաւ իր սրտագին շնորհակալութիւնն է յայտնում Բատաւիայի Հայ ազգ. հաստատութեանց Պատ. Վարչութեան, որ անցեալ՝ 1913 թուականից սկսեալ բարեհաճել է մեր Կեդրոնական դպրոցին յատկացր-



ուած Մ. և Յ. ուսումնարանի սովորական նուէրը 1200 գիլդրից ինքնաբերաբար բարձրացնել 1500 գիլդրի։

## ԱԶՆ. Տ. Վ. ՔԱՆԱՆԵԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Գէորգ-Քանանեան դպրոցի հիմնադիր և պատուաւոր հոգաբարձուհի տ. Վ. Քանանեանի 1913 թ. Մայիսի 12 գրութեան համաձայն Մեծարգոյ Դր. Մ. Ս. Գ. Աղանուրը բարեհաճեց յանձն առնել Յարգելի Տիկնոջ ներկայացուցչի պաշտօնը և տարուայ սկզբից սկսեց մասնակցել Հոգաբարձութեանս նիստերին։

## ՈՒՍՈՒՑՉ. ԿԱԶՄԸ

Այս տարի Գէորգ-Քանանեան դպրոցի համար փոխ-տեսուչ նշանակեցինք Արժ. Տէր Վարդան քահ. Վարդանեանին, իսկ մի քանի հեռացած ուսուցիչ-վարժուհիների փոխարէն Հոգաբարձութիւնս հարկաւոր դիմումներ արեց, որոնք դժբախտաբար ապարդիւն անցան։

Մի հմուտ մանկապարտիզպանուհու համար որ դիմել էինք Ազն. տ. Վ. Քանանեանին, 1913 թ. Դեկտ. 19 գրութեամբ պատասխան ստացուեց, որով յարգելի տիկինը յայտնում էր թէ ցաւում է որ հնարաւորութիւն չունի իրագործելու Հոգաբարձութեանս ցանկութիւնը։

Հայկական առարկաների համար հրաւիրուած մի փորձառու ուսուցիչ մերժեց գալը, իսկ ճեմարանաւարտ մի ուրիշը հակառակ Հոգաբարձութեանս մի քանի հեռագիրներին ու դիմումներին, վարձուեց Թէհրանում և չեկաւ տեղս, չնայելով որ մինչանգամ դասեր ևս յատկացրուել էին նրան և անունն իսկ մտցրուել դասացուցակում։

Անգլ. լեզւով աւանդւող առարկաների համար հրաւիրուած մի երրորդ ուսուցիչ ևս չկարողացաւ ժամանակին հասնել։

Եւ այսպէս, մեզանից անկախ պատճառներով տարուայ առաջին ամիսները եղան դասատուների յաճախակի փոփոխութիւններ, մինչև որ տեղական ույժերից լաւագոյնները հրաւիրուեցին և գործը կանոնաւոր ընթացք գտաւ։ Խանգարումներին քիչ չնպաստեց և դասատուների ոմանց անժամանակ հեռանալը դպրոցից։

## ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃԻՒՂ

Հակառակ Հոգաբարձութեանս բուռն ցանկութեան, որով նպատակ ունէր Երկաթագործարանի դրութիւնը բարձրացնելով հասցնել Կօշկակարանոցին, ստիպուած եղանք ներկայ տարում փակել Երկաթագործարանը, քանի որ ոչ նիւթական և ոչ ևս բարոյական օգուտ էր ստացւում բացի վնասից։

Ցաւում ենք նաև որ Ջուհլականոցն ևս աշակերտ չունի, այդ արհեստն ևս սիրող չկայ։

## ԴՊՐՈՑ. ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Նախորդ Հոգաբարձութեան օրով դպրոցներիս տեսչի խմբագրած և մանկավարժական խորհրդի վաւերացրած դըպրոցական ներքին կանոնադրութիւնը այս տարի յանձնուեց Հոգաբարձութեանս տպագրելու համար։ Սակայն Հոգաբարձութիւնս երկար տատանումներից յետոյ, նկատելով որ առանց թեմակալ առաջնորդի վաւերացման՝ աւելորդ է այդպիսի մի կանոնադրութեան տպագրութիւնը, որոշեց այդ պակասի լրացումն թողնել առ յապայն։



## Հ. ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԹՈՒՐԵԱՆԻ ՀԱՐՑԸ

Ինչպէս անցեալ տարուայ տեղեկագրում յայտնեցինք, Հոգաբարձութիւնս բանակցութեան մէջ էր մեր հնդկահայ հայրենակիցների հետ Հ. Թուրեանին որպէս մեր Ազգ. երկսեռ դպրոցների վերատեսուչ հրաւիրելու առթիւ։ Ստանալով նրանց համաձայնութիւնը, բանակցութեան մէջ մտանք ուղղակի իր Հ. Թուրեանի հետ, դիմելով միևնոյն ժամանակ և ազգիս Վեհափառ Հայրապետին, որ բարեհաճէ միջոցներ և դիւրութիւններ շնորհել գործը յաջողութեամբ ի կատար ածելու։

Կաթուղիկոսական Դիւանի միջոցով ստացել ենք արդէն Նորին Վեհափառութեան հաճութիւնը և եղած կարգադրութեանն իրազեկ կացուցանելով Հ. Թուրեանին, անհամբեր սպասում ենք կարդալու նրանից մանրամասն նամակ իր տեղս գալու և պայմանների վերաբերմամբ։

## ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄ

1913 թ. վերջերին Հոգաբարձութեանս անդամ պ. Յովհաննէսեան Ղարախանեանը մեկնեց դէպի Շիրազ, առանց ցարդ հրաժարական տալու։

Հոկտ. 11-ին պ. Ալէքսան Աբրահամեանն հեռացաւ պաշտօնից, Առաջնորդ. Խորհրդարանին ներկայացրած իր հրաժարականի մէջ պատճառաբանելով թէ «Չի կամենում մասնակից լինել դպրոցներիս ցաւալի անկման գործին»։

Թէ ինչումն էր դպրոցների «անկումը», մեզ անյայտ մընաց, քանի որ ինչպէս ուսումն. տեղեկագրից պարզապէս երևում է, դպրոցները ըստ ուսումնականին այս տարի ամենայաջող շրջանն են բոլորել, (էջ 27) իսկ հաշուեկշիռն ևս ցոյց է տալիս որ ըստ տնտեսականին ևս յետ չեն եղել

նախորդ տարիներից։

1914 թ. Մայիսի 9-ին Դր. Ռանդոլֆը հրաժարուեց «ազատ ժամեր չունենալու պատճառով»։

Մայիսի 23-ին պ. Թադդէոս Ն. Տէր Գալստանեանն և պ. Մարտիրոս Մ. Աբգարեանն հեռացան պաշտօնից, Առաջնորդ. Խորհրդարանին ներկայացրած հրաժարականի մէջ յայտնելով որ առաջինը «անձնական» և երկրորդը «մանր գործերի» պատճառով ստիպուած են եղել հեռանալու։

Հետևաբար վերջին ամիսները Հոգաբարձութիւնս իր գործերը վարել է երեք անդամներով, նախագահութեամբ Առաջնորդ. Խորհրդարանի Նախանդամ՝ Բարձր Տէր Եզնիկ վ. Երկարակեցեանի և անդամակցութեամբ Ազն. տ. Վ. Քանանեանի ներկայացուցիչ՝ Մեծարգոյ բժ. Մ. Օ. Պ. Աղանուրի, ընդ ամենը 5½ ամիսով, մինչև որ նոր ընտրութեամբ կազմը լրացուի։

---

Վերջացնելով սոյն հակիրճ տեղեկագիրը, անկեղծ շնորհակալութիւն ենք յայտնում դպրոցներիս բոլոր բարերարներին և աշխատաւորներին, որոնք իրենց սրտին մօտ զգալով մատաղ սերնդի կրթութեան և դաստիարակութեան սրբազան գործը, չեն խնայել նիւթական և բարոյական ամէն կարգի օժանդակութիւն և զոհողութիւն։

Նոր — Ջուղա
20 Յուլիս 1914 թ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՀԱՇԻՒ

## ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ

## ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ՝

## Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ

## ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

## ԵՒ

## ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃՒՂԵՐԻ

1913—1914 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՑ.

## Հաշուեկշիռ Ել-և-մուտից Ազգ. Կեդր. Տղայոց, Գէորգ-Քանանեան վասն 1913—14 ուսումն. տարւոյ, ի միոյ և Ս. Կատարինեան Օրիորդաց Ուսումնարանաց Նոր-Ջուղայի, Օգոստոսի 1913—ց'31 Յուլիսի 1914 ամի։

### ՄՈՒՏՔ

| | Ղռան | Սենր | Ղռան | Սենր |
|---|---|---|---|---|
| Առ մին Օգոստոսի 1913 թ. պատրաստ . . | | | 4,424 | 85 |
| **Բարերար Ազգ. Հաստատութեանց վարչութիւն** | | | | |
| Ստացուած Բաժմունք Հայ. Ազգ. հաստատութեանց Պաշտպանութեան Ատենից | | | | |
| ա) Նուէր Մ. և Ց. Ուսումնարանից Գլ. 1500 — 0 | | | | |
| բ) Ի հաշիւ Ազգ. Կեդր. դպրոցի » 2074—34 | | | | |
| գ) Ի հաշիւ Ս. Կատ. օր. դպրոցին » 560— 0 | | | | |
| Գումարն Գլ. 4134—34 | | | 18,636 | 70 |
| **Ստացուած նպաստներ** | | | | |
| Մեծ. պ. պ. Աէթ. Պօղոս և ընկերութեան մի ամեայ 1914 թուի 200 Անգլ. ոսկւոյ նպաստը . | 10,875 | | | |
| Սինկափուրայ Մեծ. պ. պ. Սարգսեաննս և Պօղոս ընկերութեան 19 Անգլ. ոսկւոյ և 2 շիլինգի նպաստը տեղւոյս Մեծ. պ. պ. Նոայի և Սարգիս ընկերութեան միջոցաւ . . . . . . . | 1,074 | 35 | | |
| Բաժանորդ Մեծ. պ. Գէորգ Տէր Ղ. Աբգարեանցից իրեն տան և այգւոյ վարձերը իբրև նպաստ Դպրոցներիս չքաւոր աշակերտաց համար . . . | 496 | 10 | | |
| Վեհափառ Շահի տարեկան 100 թումանի նպաստը որոյ կէս մասն է միայն վճարուած . . . | 500 | | | |
| Ս. Յովհաննու եկեղեցւոյ Երեսփոխանէից Պանդոկի 1913 թուի վարձի կէս մասը համաձայն հանգ. պ. Մարտիրոս Ս. Տէր Ոսկանեանի կանոնադրութեան ի յիշատակ իւր հանգ. տիկնոջ . . | 200 | | 13,145 | 45 |
| **Ներկայացման եւ Տօնածառի հաշիւ** | | | | |
| Ստացուած մանկական երեկոյթից և ներկայացումներից . . . . . . . | | | 937 | 40 |
| **Թոշակագրամ** | | | | |
| Ստացուած թոշակագրամ դպրոցներիս կարողաւոր աշակերտ—աշակերտուհիներից . . . | | | 60 | |
| **Քննականագրամ** | | | | |
| [illegible] | | | 58 | 55 |

### ԵԼՔ

| | Ղռան | Սենր | Ղռան | Սենր |
|---|---|---|---|---|
| **Ռոճիկի հաշիւ** | | | | |
| Վճարուած ուսումնական տարւոյս ընթացքում ուսուցիչներին և վարժուհիներին . . | | | 51,740 | |
| **Տնային վարձի հաշիւ** | | | | |
| Վճարուած դպրոցներիս ծառաներին 12 ամիսների վարձեր . . . . . | | | 4,545 | |
| **Աշակերտների նիւթերի հաշիւ** | | | | |
| Վճարուած Աշակերտների նիւթերի գին (դպրոցներում գործածուած) . . . . | | | 856 | |
| **Մանր ծախուց հաշիւ** | | | | |
| Վճարուած զանազան մանր իրերի գին, դպրոցները ջրելու վարձ և այլն . . . | | | 1,588 | |
| **Կահ-կարասեաց հաշիւ** | | | | |
| Վճարուած զանազան կահ կարասեաց գին . . | | | 201 | |
| **Տոկոսի հաշիւ** | | | | |
| Վճարուած հանգ. Յովսէփ Պօղոսեանեանի Բարեգործական Աւանդի 500 թումանեաց տոկոսը . . | | | 300 | |
| **Պարտուց հաշիւ** | | | | |
| Վճարուած Յովսէփ Պօղոսեանեանի Բարեգործական Աւանդի տոկոսով պարտքը . . . . | 5,000 | | | |
| Վճարուած Հոգևոր դպրանոցի փոխառինարար պարտքը | 2,000 | | 7,000 | |
| **Բոյաճ գիւղի հաշիւ** | | | | |
| Վճարուած նոյն գիւղի բերքը Ջուղա փոխադրելու ծախս . . . . . . | | | 12,160 | 55 |
| **Չիգան գիւղի հաշիւ** | | | | |
| Վճարուած նոյն գիւղի բերքը Ջուղա փոխադրելու ծախս . . . . . . | | | 3,090 | |

## ՄՈՒՏՔ

| | Ղրան | Սենթ | Ղրան | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 46,108 | 95 |
| **Տոկոսի հաշիւ** | | | | |
| Ստացուած տեղւոյս կայսերական Բանքէն հանգ. Տէր Իսահակ Ք. Ամբարչեանի կտակած 1000 ղրանեաց տոկոսը . . . . . . | 35 | | | |
| Հանգ. տիկին Սառրա Աղանեանի կտակած 1000 ղրանեաց տոկոսը . . . . . | 35 | | 70 | |
| **Հանգ. Գրիգոր Գասպարեանի հաշիւ** | | | | |
| Ստացուած վերոյիշեալի կտակած տան և այգւոյ սոյն տարուայ վարձերը . . . | | | 640 | |
| **Բոլորան գիւղի հաշիւ** | | | | |
| Ստացուած Բոլորան գիւղի 1913 Թուի ցորենի և գարու արդիւնքները . . . | | | 34,603 | 50 |
| **Զիգան գիւղի հաշիւ** | | | | |
| Ստացուած Զիգան գիւղի 1913 Թուի ցորենի և գարու արդիւնքները . . . . | | | 11,854 | 90 |
| **Վիճակախաղի հաշիւ** | | | | |
| Ստացուած վիճակախաղի շահող տոմսերի տասանորդների մասը . . . . | | | 494 | 50 |
| **Հեռագրի հաշիւ** | | | | |
| Ստացուած մի հեռագրի աւելորդ վճարուած գումարը | | | 20 | 05 |



## ԵԼՔ

| | Ղրան | Սենթ | Ղրան | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 85,507 | 25 |
| **Տօնածառի հաշիւ** | | | | |
| Վճարած մանկական երեկոյթի ծախսերը . . | | | 611 | 25 |
| **Վառելիքի հաշիւ** | | | | |
| Վճարած դպրոցներիս համար վառելափայտի գին | | | 2,260 | 90 |
| **Վիճակախաղի հաշիւ** | | | | |
| Վճարած վիճակախաղի շահող տոմսերի գումարները | | | 1,950 | |
| **Նորոգութեան հաշիւ** | | | | |
| Վճարած զանազան անհրաժեշտ նորոգութեան ծախսեր . . . . . . | | | 1,206 | 75 |
| **Ձեռագործի հաշիւ** | | | | |
| Վճարած ձեռագործի նիւթեղէնաց գին . . | | | 266 | 15 |
| **Տպագրութեան հաշիւ** | | | | |
| Վճարած Ս. Էմինաճրկին Տպարանին զանազան տպագրութեան ծախսեր և թղթի գին . . | | | 210 | |
| **Մանկապարտէզի հաշիւ** | | | | |
| Վճարած մանկապարտէզի համար գնած զանազան իրերի գին . . . . . . | | | 94 | 60 |
| **Դեսնավարժի հաշիւ** | | | | |
| Վճարած Կուսանաց Մենաստանի սոյն տարուայ գետնավարձը . . . . . | | | 500 | |
| **Նպաստից հաշիւ** | | | | |
| Վճարած նախկին ուսուցիչ պ. Ռ. Գ.-ին իբրև ճանապարհածախս . . . . . | | | 250 | |
| **Գրավաճառանոցի հաշիւ** | | | | |
| Վճարած զանազան գրքերի գներ . . . | | | 239 | |
| **Պահանջից հաշիւ** | | | | |

## Հաշուեկշիռ Ել-և-մտից Ազգային Արհեստագիտական Դպրոցների 1 Օգոստոսի 1913—ց'31 Յուլիսի 191 ամի։

### ՄՈՒՏՔ

| | Դրամ | Սենթ | Դրամ | Սենթ |
|---|---|---|---|---|
| Պատրաստ գումար անցեալ տարուանից . . | | | 956 | 80 |
| Կօշկակարանոցի բաժին | | | | |
| Ստացուած կօշկակարանոցի 12 ամիսների մուտքը | | | 13,525 | |
| Ջուհլականոցի բաժին | | | | |
| Ստացուած Ջուհլականոցի 12 ամիսների մուտքը | | | 5,626 | 70 |
| Տոկոսի բաժին | | | | |
| Ստացուած Մեծ. պ. պ. Արզարեանց դրամագլխի 6 ամսուայ (Յուլիսից—Դեկտեմբեր 1913) տոկոսը ռուփիք 623—15—9 . . . . . . | | | 2,295 | 15 |
| Ծանօթ. Առաջին վեց ամիսների տոկոսը ստացած լինելով անցեալ տարեշրջանում (տես 1912—13 տարեկան հաշիւը) | | | | |
| Նպաստից բաժին | | | | |
| Ստացուած Սինկափուրի Մեծ. պ. պ. Սանփանեանս Պօղոս և Ընկ. 8 Անգլ. ոսկւոյ նպաստը տեղւոյս Մեծ. պ. պ. Եսայի Սարգիս և Ընկ. միջոցաւ . | | | 450 | |
| Երկաթագործարանի բաժին | | | | |
| Ստացուած Երկաթագործարանից 2 վաճառուած կառքերի գին . . . . . | 7,000 | | | |
| Մանր նորոգութեանց մուտքեր . . . | 348 | 85 | 7,348 | 85 |
| Գումարն է | | | 30,202 | 50 |

### ԵԼՔ

| | Դրամ | Սենթ | Դրամ | Սենթ |
|---|---|---|---|---|
| Կօշկակարանոցի բաժին | | | | |
| Վճարած Կաշեղինաց գին . . . . | 9,091 | 35 | | |
| » Նիւթեղինաց » . . . . | 868 | 15 | | |
| » Տնտեսի, վարպետի և աշակերտների վարձեր | 5,600 | | | |
| » Զանազան մանր ծախսուց համար . . | 71 | 95 | | |
| » Գործիքների գին . . . | 32 | | | |
| » Նպաստ Յովհաննէս աշակերտին կօշկակարանոցը թողնելիս . . . . | 200 | | 15,863 | 45 |
| Ջուհլականոցի բաժին | | | | |
| Վճարած մանածի գին . . . . . | 2,317 | | | |
| « Թել ոլորելոյ վարձ . . . | 298 | 30 | | |
| » » ներկելոյ » . . . | 441 | 10 | | |
| » Տնտեսի, վարպետի և աշակերտների վարձեր | 2,362 | | | |
| » Վառելիքի գին և մանր ծախսուց համար . | 278 | 85 | 5,697 | 25 |
| Երկաթագործարանի բաժին | | | | |
| Վճարած նիւթեղինաց գին . . . . | 1,656 | 80 | | |
| » Վարպետի և աշակերտի վարձեր . . | 674 | | | |
| » Մանր ծախսուց հաշուին . . . | 231 | 95 | | |
| » Խանութի վարձ (14 ամիսների) . . | 420 | | | |
| » Ածուխի գին . . . . . | 60 | | | |
| » պ. Արմենակ Յարութիւնեանին իւրեն աւանդի գումարը . . . . . | 800 | | | |
| Վճարած պ. Թումի Յովհաննէսեանին ի հաշիւ երկու կառքերի լրացման . . . . . | 3,090 | | 6,932 | 75 |
| Բալանս փոխադրելի . . . . . | | | 1,709 | 05 |
| Գումարն է | | | 30,202 | 50 |

1 Օգոստոսի 1914 թ. ի Նոր—Ջուղա.

Հոգաբարձութիւն Ազգ. Երկսեռ դպրոցների

Առաջնորդական Խորհրդարանս քննելով զհաշւետւութիւն Ազգային Երկսեռ Ուսումնարանաց Նոր-Ջուղայի, սկսեալ ի միոյ Օգոստոսի 1913 ց'31 Յուլիս 1914 ամի, ուղիղ գըտաւ, զորս վաւերացուցանէ ստորագրութեամբ Նախանդամոյ և Անդամոց իւրոց 17 Օգոստոսի 1914 ամի, ի Ս. Ամենափրկչեան Վանս Նոր-Ջուղայի։

Նախանդամ Խորհրդարանի՝ Եպիսկ. վ. Երկարակեցեան

Անդամք՝ Եսայի քհնյ. Տէր Ս. Յովհաննէսեան
» Կարապետ քհնյ. Թումիկեան

20091
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0055187